«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Բաժնետոմսերի, շահութաբաժինների և երկարաժամկետ արժեքի վերաբերյալ

Բովանդակություն

ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ 2

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ 5

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ 10

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ 13

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ 14

ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հարց 1: Որքա՞ն շահութաբաժին է Ակբա բանկն առաջարկում 2025 ֆինանսական տարվա համար:

Պատասխան. Ակբա բանկի Խորհուրդն առաջարկել է 2025 ֆինանսական տարվա արդյունքներով յուրաքանչյուր բաժնետոմսի դիմաց վճարել 1,250 (հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ տարեկան շահութաբաժին, որը պետք է հաստատվի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից: Ընդհանուր ժողովի ամսաթիվը և մանրամասները կհայտարարվեն լրացուցիչ:

Հարց 2. Ե՞րբ են վճարվելու շահութաբաժինները:

Պատասխան. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից առաջարկը հաստատվելու պարագայում շահութաբաժինները կվճարվեն ամենաուշը մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ: Նախորդ տարիների փորձը վկայում է, որ շահութաբաժինները սովորաբար վճարվում են բաժնետերերի ընդհանուր ժողովից հետո 5-10 աշխատանքային օրերի ընթացքում, սովորաբար՝ հունիս ամսվա առաջին կեսին:

Հարց 3. Ո՞վ իրավունք ունի ստանալ շահութաբաժին:

Պատասխան. Տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեն Ակբա բանկի բոլոր այն բաժնետերերը, ովքեր գրանցված կլինեն Ակբայի բաժնետերերի ռեեստրում: Եթե գրանցման օրվա դրությամբ Դուք ունեք Ակբա բանկի բաժնետոմսեր, ապա շահութաբաժինը Ձեզ կվճարվի ավտոմատ կերպով, և որևէ լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

Հարց 4. Ե՞րբ է շահութաբաժինների վճարման համար գրանցման ամսաթիվը:

Պատասխան. 2025 թվականի արդյունքներով շահութաբաժնների վճարման համար գրանցման ամսաթիվն է 2026 թվականի ապրիլի 21-ի ժամը 18:00-ն (Երևանի ժամանակով): Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք, ով այդ պահին գրանցված է որպես բաժնետեր Ակբա բանկի բաժնետերերի գրանցամատյանում, իրավունք կունենա ստանալ շահութաբաժին:
Օրինակ՝ եթե Դուք գնել եք Ակբա բանկի բաժնետոմսեր մինչև 2026 թվականի ապրիլի 21-ը և այդ օրը ժամը 18:00-ի դրությամբ դեռ պահում եք դրանք, ապա կստանաք շահութաբաժին: Եթե Դուք գնեք բաժնետոմսերը այդ ամսաթվից հետո,

ապա 2025 թվականի շահութաբաժինները կվճարվեն նախորդ բաժնետիրոջը, սակայն Դուք կարող եք օգտվել հաջորդ տարվա շահութաբաժիններից (եթե շարունակեք մնալ Ակբայի բաժնետեր հաջորդ տարվա գրանցման ամսաթվի դրությամբ):

Հարց 5. Արդյո՞ք ես պետք է որևէ գործողություն ձեռնարկեմ շահութաբաժինը ստանալու համար:

Պատասխան. Ոչ: Եթե Դուք գրանցված եք որպես բաժնետեր գրանցման օրվա դրությամբ, ապա շահութաբաժինը կվճարվի ավտոմատ կերպով, բաժնետերերի գրանցամատյանում Ձեր կողմից նշված բանկային հաշվին:

Հարց 6. Արդյո՞ք շահութաբաժինները հարկվում են:

Պատասխան. Ակբա բանկի բաժնետոմսերը ցուցակված են ՀՀ Ֆոնդային բորսայում: Հետաբար, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, Ակբայի կողմից վճարվող շահութաբաժինները չեն հարկվում:

Հարց 7. Ի՞նչ արժույթով են վճարվելու շահութաբաժինները:

Պատասխան. Շահութաբաժինները վճարվելու են ՀՀ դրամով:

Հարց 8. Ինչպե՞ս են վճարվելու շահութաբաժինները:

Պատասխան. Շահութաբաժինները վճարվում են անկանխիկ եղանակով, բանկային փոխանցմամբ՝ բաժնետերերի գրանցամատյանում գրանցված հաշվեհամարին:

Հարց 9. Ի՞նչ շահութաբաժնային քաղաքականություն է առաջարկում Ակբա բանկը:

Պատասխան. Համաձայն Ակբայի գործող շահութաբաժնային քաղաքականության՝ բանկի տարեկան զուտ շահույթի առնվազն 20%-ը վճարվում է բաժնետերերին շահութաբաժինների տեսքով՝ հաշվի առնելով նաև Բանկի ֆինանսական ցուցանիշները, կապիտալի համարժեքության պահանջները և օրենսդրական սահմանափակումները:
Քաղաքականությունը մշակված է բաժնետերերին կանոնավոր դրամական եկամուտների և շահույթի վերաներդրման միջև հավասարակշռություն հաստատելու

համար՝ նպատակ ունենալով ապահովել կանխատեսելի եկամուտներ, կայուն աճ, ամրապնդել բանկի կապիտալի բազան և պահպանել ֆինանսական կայունությունը: Չնայած շահութաբաժինները հայտարարվում են յուրաքանչյուր տարի և չեն կարող երաշխավորվել, Ակբայի երկարաժամկետ նպատակն է ապահովել կանխատեսելի և աճող եկամուտներ, որոնք արտացոլում են Բանկի կողմից շահույթ ստեղծելու կարողությունները, խելամիտ ռիսկերի կառավարումը և կապիտալի կարգապահ կառավարման հանձնառությունը:

Հարց 10. Ինչպիսի՞ն է Ակբայի կողմից վերջին տարիներին վճարված շահութաբաժինների պատմությունը:

Պատասխան.
- 2021թ.՝ մեկ բաժնետոմսի դիմաց 600 ՀՀ դրամ
- 2022թ.՝ մեկ բաժնետոմսի դիմաց 800 ՀՀ դրամ
- 2023թ.՝ մեկ բաժնետոմսի դիմաց 1000 ՀՀ դրամ
- 2024թ.՝ մեկ բաժնետոմսի դիմաց 1100 ՀՀ դրամ
- 2025թ.՝ մեկ բաժնետոմսի դիմաց 1250 ՀՀ դրամ (ենթակա է հաստատման)

2021–2025 թվականների ընթացքում մեկ բաժնետոմսի դիմաց շահութաբաժինն ավելի քան կրկնապատկվել է՝ բացարձակ առումով աճելով 2.1 անգամ: Սա կազմում է մոտ 20% միջին տարեկան աճի տեմպ (CAGR), որն արտացոլում է բանկի շահութաբերության բարձր մակարդակը, կապիտալի կայուն դիրքը և բաժնետերերի համար եկամուտների կայուն աճի հանձնառությունը:

Հարց 11. Որքա՞ն է 2025 թվականի արդյունքներով շահութաբաժինների վճարման գործակիցը:

Պատասխան. 2025 թվականի համար առաջարկվող շահութաբաժինները կազմում են զուտ շահույթի 20%-ից փոքր-ինչ ավելին, որը լիովին համահունչ է Բանկի երկարաժամկետ շահութաբաժնային և կապիտալի կառավարման մոտեցումներին:

Հարց 12. Արդյո՞ք բանկը երաշխավորում է ապագայում ևս շահութաբաժինների վճարումը:

Պատասխան. Բանկն իրավունք չունի երաշխավորել ապագայում շահութաբաժինների վճարումը: Շահութաբաժինները կախված են բանկի շահութաբերությունից, կապիտալի պահանջներից, օրենսդրական սահմանափակումներից, ինչպես նաև բանկի խորհրդի և բաժնետերերի որոշումներից: Այնուամենայնիվ, Ակբայի քաղաքականությունը մշակված է՝ ներդրողների համար ապահովելու կանխատեսելիություն, այլ ոչ թե անկայունություն:

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հարց 13. Ո՞վքեր են Ակբա բանկ բաժնետերերը:

Պատասխան. Ակբա բանկն ունի բաժնետերերի բազմազան և հավասարակշռված բազա, որտեղ համատեղված են երկարաժամկետ ռազմավարական ներդրողների և ընդհանուր լայն հանրության առկայությունը: Այսպիսի կառուցվածքը նպաստում է ֆինանսական կայունությանը, լավ կառավարմանը և բանկի բաժնետոմսերի իրացվելիությանը:

Ակբայի բաժնետերերի հիմնական խմբերն են.

- **«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ (մեծամասնական բաժնետեր՝ 75%):** Ակբա Ֆեդերացիան Ակբա բանկի նշանակալի բաժնետերն է 2017 թվականից ի վեր՝ իր 75% բաժնեմասի միջոցով ներկայացնելով ավելի քան 75,000 հայ գյուղատնտեսների շահերը: Բաժնեմասնակցությունից զատ, այն ծառայում է որպես զարգացման կատալիզատոր՝ վերաներդնելով արժեքը գյուղատնտեսության, նորարարության և համայնքների կայուն զարգացման մեջ՝ համապատասխանեցնելով այն միջազգային կառավարման և ESG ստանդարտներին:
- **«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» հանրային սահմանափակ ընկերություն (Պրոպարկո) (10%):** Պրոպարկոն «Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD)» խմբի դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թևը: Բանկի բաժնետեր է 2024թ. դեկտեմբերից: Այն աջակցում է զարգացող շուկաներում կայուն տնտեսական աճին՝ երկարաժամկետ ֆինանսավորման, բաժնետիրական ներդրումների և ESG բարձր չափանիշներին համապատասխանող տեխնիկական աջակցության միջոցով:
- **Ազատ շրջանառվող մաս՝ անհատ բաժնետերեր, այլ ինստիտուցիոնալ և մասնագիտացված ներդրողներ (15%):** Բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը տնօրինվում է շուրջ 5000 բաժնետերերի կողմից, այդ թվում՝ անհատ ֆիզիկական անձինք, աշխատակիցներ, իրավաբանական անձինք և ներդրումային ընկերություններ: Այս դիվերսիֆիկացված բաժնետերերի բազան նպաստում է բաժնետոմսերի իրացվելիությանը, շուկայի տեսանելիությանը և շահառուների լայն ներգրավվածությանը, միաժամանակ ամրապնդելով թափանցիկությունը և կայուն կորպորատիվ կառավարումը:

Հարց 14. Որտեղ են ցուցակված Ակբա բանկի բաժնետոմսերը:

Պատասխան. Ակբա բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX): Դուք կարող եք ուսումնասիրել բաժնետոմսերի կատարողականը այս հղմամբ՝ https://amx.am/am/instrument_page/AMACBAS10ER7

Հարց 15. Ինչպես կարող եմ գնել Ակբա բանկի բաժնետոմսերը:

Պատասխան. Բաժնետոմսերը կարելի է գնել շուրջօրյա (24/7) ռեժիմով Ակբա բանկի՝ **acba digital** հավելվածի միջոցով: Պետք է մուտք գործել «Ներդրումներ» բաժին, այնուհետև՝ «Շուկա» ենթաբաժին, ընտրել «Տեղական շուկա» և առաջին տողում կտեսնեք Ակբայի բաժնետոմսի մասին ինֆորմացիան: Շարունակելու համար սեղմեք «Գնել» կոճակը:
Պետք է հաշվի առնել, որ առաջին անգամ բաժնետոմսերը գնելիս անհրաժեշտ է լրացնել ներդրումային փորձի և գիտելիքների մասին ուսումնասիրության թերթիկը, որն օրենսդրությամբ պարտադիր է բրոքերային ծառայությունների մատուցման և արժեթղթերի հաշվի բացման պայմանագրերի կնքման համար:
Դուք կարող եք Ակբայի բաժնետոմսեր գնել նաև լիցենզավորված բրոքերների կամ ներդրումային ընկերությունների միջոցով:

Հարց 16. Արդյո՞ք ցանկացած պահի կարող եմ բաժնետոմսեր գնել կամ վաճառել:

Պատասխան. Բաժնետոմսերով կարելի է առևտուր անել ֆոնդային բորսայի աշխատանքային օրերին, երբ շուկան բաց է (արժեթղթերի գնման կամ վաճառքի հայտերը դիտարկվում են աշխատանքային օրերին, ժամը 11:00-ից մինչև 15:00-ն): Ինչպես բոլոր ցուցակված արժեթղթերի դեպքում, Ակբայի բաժնետոմսերով գործարքների կատարումը կախված է շուկայի իրացվելիությունից և գնորդների կամ վաճառողների առկայությունից: Ակբա բանկի բաժնետոմսերի իրացվելիության խթանման համար առկա է շուկա ստեղծող ընկերություն (market maker), որն **Արմբրոկ** ընկերությունն է:

Հարց 17. Արդյո՞ք բաժնետեր դառնալու համար պահանջվում է բաժնետոմսերի նվազագույն քանակ:

Պատասխան. Ոչ: Ակբա բանկի բաժնետեր դառնալու համար բաժնետոմսերի նվազագույն քանակի պահանջ չկա: Դուք կօգտվեք բաժնետերերի նույն իրավունքներից, նույնիսկ եթե ունեք 1 բաժնետոմս:

Հարց 18. Ինչպե՞ս է որոշվում բաժնետոմսերի գինը:

Պատասխան. Ակբա բանկի բաժնետոմսերի գինը որոշվում է ֆոնդային բորսայում շուկայի առաջարկով և պահանջարկով: Սա նշանակում է, որ գինն արտացոլում է, թե քանի ներդրող է պատրաստ գնել և վաճառել բաժնետոմսեր տվյալ պահին: Երբ պահանջարկը գերազանցում է առաջարկը, գինը հակված է բարձրանալու, իսկ երբ առաջարկը գերազանցում է պահանջարկը, ապա գինը կարող է նվազել:
Բաժնետոմսի գնի վրա կարող են ազդել նաև մի շարք այլ գործոններ, այդ թվում՝ բանկի ֆինանսական արդյունքները, շահութաբաժնային քաղաքականությունը, աճի հեռանկարները, ընդհանուր շուկայական պայմանները, գլոբալ ռիսկերը և ներդրողների տրամադրվածությունը:
Բացի այդ, Ակբա բանկն ունի շուկա ստեղծող (market maker, **Արմբրոկ** ընկերություն) Հայաստանի ֆոնդային բորսայում, որի դերն է աջակցել բաժնետոմսերի առևտրային իրացվելիությանը՝ անընդհատ տրամադրելով գնման և վաճառքի գնանշումներ: Սա օգնում է ապահովել ավելի սահուն առևտուր և ավելի հուսալի գնագոյացում, հատկապես շուկայական ցածր ակտիվության ժամանակահատվածներում:
Չնայած կարճաժամկետ հորիզոնում գները կարող են տատանվել, Ակբա բանկի երկարաժամկետ նպատակն այն է, որ բաժնետոմսերի գինը ավելի ու ավելի ճշգրիտ արտացոլի Բանկի հիմնական ցուցանիշներն ու կատարողականը, ներառյալ եկամտի աճը, կապիտալի հզորությունը և կայուն շահութաբաժինները:

Հարց 19. Որտե՞ղ կարող եմ տեսնել Ակբա բանկի բաժնետոմսերի ընթացիկ գինը:

Պատասխան. Ակբա բանկի բաժնետոմսի գինը ցուցադրվում է acba digital բջջային հավելվածի «Ներդրումներ» բաժնում: Եթե արդեն իսկ ունեք բաժնետոմսեր, ապա պետք է մուտք գործեք «Իմ արժեթղթերը» ենթաբաժին, իսկ եթե չունեք բաժնետոմսեր, ապա պետք է մուտք գործել «Շուկա», ընտրել «Տեղական շուկա» և առաջին տողում կտեսնեք Ակբայի բաժնետոմսի մասին ինֆորմացիան:
Գինը երևում է նաև Հայաստանի ֆոնդային բորսայի կայքում «Շուկայի տվյալներ» բաժնի «Բաժնետոմսեր» հատվածում: Գինը հասանելի է նաև բոլոր ներդրումային ծառայություններ մատուցող ընկերություններին:

Հարց 20. Որքա՞ն հաճախ է փոխվում բաժնետոմսի գինը:

Պատասխան. Ակբա բանկի բաժնետոմսի գինը կարող է փոխվել յուրաքանչյուր առևտրային օր՝ Հայաստանի ֆոնդային բորսայում առևտրի ժամերի ընթացքում:
Գնային փոփոխություններ տեղի են ունենում, երբ շուկայում համընկնում են գնման և վաճառքի պատվերները: Ավելի բարձր առևտրային ակտիվության օրերին գինը կարող է ավելի հաճախ փոխվել, իսկ ավելի հանգիստ օրերին՝ անփոփոխ մնալ:

Հարց 21. Ինչպիսի՞ն է Ակբայի բաժնետոմսերի շուկայական գնի և հաշվեկշռային արժեքի հարաբերակցությունը:

Պատասխան. Ակբայի բաժնետոմսերի գինը ներկայումս ցածր է մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքից: 1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 31.12.2025թ. դրությամբ կազմել է 32,572 ՀՀ դրամ, իսկ շուկայական արժեքը նույն ամսաթվի դրությամբ՝ 15,600 ՀՀ դրամ: Այսպիսով բաժնետոմսի գնի և հաշվեկշռային արժեքի հարաբերակցությունը 2025 թվականի տարեվերջի դրությամբ կազմել է 0.48x: Դա նշանակում է, որ բաժնետոմսերը վաճառվում են իրենց հաշվապահական արժեքի կեսից պակաս, այսինքն՝ բաժնետոմսերը շուկայում դեռևս թերագնահատված են և չեն համապատասխանում իրական արժեքին:
Գնորոշման այս տարբերությունը սակայն պայմանավորված չէ բանկի կատարողականով կամ ցուցանիշներով: Ընդհակառակը, Ակբան բոլոր հիմնական ցուցանիշներով (ակտիվներ, վարկեր, կապիտալ, ավանդներ, զուտ շահույթ) Հայաստանի առաջատար 3 բանկերի շարքում է, ունի կայուն և ուժեղ շահութաբերություն, կապիտալի ամուր համարժեքություն, հուսալի բաժնետերեր, ուժեղ կառավարում և շահութաբաժինների կայուն աճ: Արժեքների միջև այս տարբերությունը հիմնականում արտացոլում է Հայաստանում, որպես զարգացող պետության, կապիտալի շուկաների կառուցվածքային գործոնները, ինչպիսիք են՝ շուկայի սահմանափակ խորությունը, ներդրողների ցածր իրազեկվածությունը, դեռևս զարգացող ինստիտուցիոնալ ներդրողների բազան և շուկայում ընդհանուր իրացվելիության պակասը:
Ակբա բանկի ղեկավարության երկարաժամկետ նպատակն է ժամանակի ընթացքում բաժնետոմսերի շուկայական և հաշվեկշռային արժեքների միջը բացը նեղանել՝ ապահովելով կայուն եկամտի աճ, կանոնավոր շահութաբաժիններ և տեղեկությունների ճշգրիտ ու ժամանակին բացահայտում, ինչը կնպաստի շուկայում բանկի իրական արժեքի ավելի ճշգրիտ արտացոլմանը:

Հարց 22. Ինչպե՞ս է Ակբան պլանավորում բաժնետերերի համար ստեղծել երկարաժամկետ արժեք՝ առանց բաժնետոմսերի հետգնման:

Պատասխան. ՀՀ օրենսդրության համաձայն, բաժնետոմսերի հետգնումը (buyback, որպես իրացվելիության ապահահովման գործիք) բանկերի համար հասանելի չէ: Նման պայմաններում, Ակբան կենտրոնանում է հետևյալի վրա.

- Կանոնավոր շահութաբաժնային քաղաքականություն (զուտ շահույթի նվազագույնը 20%-ը վճարելու հանձնառություն),
- Սեփական կապիտալի շահութաբերության (ROE-ի) աճ՝ տարեկան 20%-ի շրջանակներում,
- Կապիտալի և հաշվեկշռի կառավարման հետևողական գերազանցություն,
- Թափանցիկություն և տեղեկությունների շարունակական բացահայտում,

- Ներդրողների հետ ներգրավվածության շարունակական ամրապնդում:

Ակբայի ղեկավարությունն այս քայլերը դիտարկում է, որպես եկամուտը՝ բաժնետերերի համար արժեքի վերածելու հիմնական գործիքներ:

Հարց 23. Ո՞րն է Ակբայի ներդրումային հորիզոնը:

Պատասխան. Ակբա բանկի բաժնետոմսերում ներդրումը պետք է դիտարկել որպես **երկարաժամկետ** ներդրում: Արժեքի ստեղծումը, ինչպես սպասվում է, տեղի է ունենալու աստիճանաբար՝ կայուն շահութաբաժինների և բաժնետոմսերի գնորոշման աստիճանական բարելավման միջոցով, քանի որ շուկայի ըմբռնումը գնալով խորանում է, և բանկի ցուցանիշներն ավելի լավ են արտացոլվում գնագոյացման մեջ:

Հարց 24. Ո՞րն է ղեկավարության նպատակը բաժնետոմսի գնորոշման վերաբերյալ:

Պատասխան. Ղեկավարության նպատակն է ժամանակի ընթացքում բաժնետոմսերի շուկայական գնագոյացումը կապել բանկի ցուցանիշների և հիմնական արդյունքների հետ, որպեսզի շուկայական գինն ավելի մոտ լինի իրական արժեքին:

Հարց 25. Արդյո՞ք Ակբա բանկը կառավարում է, կամ վերահսկում է իր բաժնետոմսերի գինը:

Պատասխան. Ոչ: Ակբա բանկը չի սահմանում, կառավարում կամ վերահսկում իր բաժնետոմսերի գինը: Բաժնետոմսի գինը որոշվում է շուկայի կողմից՝ հիմնվելով առաջարկի և պահանջարկի վրա: Միևնույն ժամանակ ՀՀ օրենսդրությունը չի թույլատրում բանկերին իրականացնել բաժնետոմսերի հետգնում, որպես իրացվելիության կառավարման գործիք: Այսպիսի պայմաններում բանկի ղեկավարությունը կենտրոնանում է այն ամենի վրա, ինչի վրա իրավունք ունի և կարող է ազդել, այն է՝ կորպորատիվ կառավարման գերազանցություն, ուժեղ ֆինանսական կատարողական, կապիտալի խելամիտ կառավարում, թափանցիկ հաղորդակցություն և երկարաժամկետ արժեքի ստեղծում: Մինչդեռ կարճաժամկետ գների տատանումները կարող են արտացոլել շուկայի ընկալումները, Ակբայի ռազմավարությունն է ապահովել, որ երկարաժամկետ հեռանկարում բաժնետոմսերի գինը ավելի ու ավելի շատ պայմանավորված լինի հիմնարար գործոններով ու կատարողականով, այլ ոչ թե զուտ ներդրողների ընկալումներով:

Հարց 26. Արդյո՞ք Ակբա բանկը պլանավորում է թողարկել նոր բաժնետոմսեր:

Պատասխան. Նոր բաժնետոմսեր թողարկելու ծրագրեր ներկայումս չկան: Ցանկացած նման որոշում ենթադրում է համապատասխան հաստատումների ստացում և հրապարակային բացահայտում:

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հարց 27. Ինչպե՞ս կարող եմ ստուգել, թե արդյոք գրանցված եմ որպես բաժնետեր:

Պատասխան. Կարող եք կապվել մեզ հետ ir@acba.am էլեկտրոնային փոստի հասցեով կամ զանգահարել մեր զանգերի կենտրոն (+374 10 31 88 88) կամ մոտենալ ցանկացած մասնաճյուղ: Կարող եք նաև կապվել նաև ձեր բրոքերի կամ բաժնետերերի գրանցամատյանը վարող կազմակերպության հետ՝ ձեր գրանցումը հաստատելու համար:

Հարց 28. Ինչպե՞ս թարմացնեմ իմ անձնական կամ բանկային տվյալները բաժնետերերի գրանցամատյանում:

Պատասխան. Փոփոխություններ կատարելու համար (օր.՝ անձնական տվյալներ, հաշվեհամարի, կոնտակային տվյալների փոփոխություն և այլն) կարող եք դիմել Ակբայի ցանկացած մասնաճյուղ: Թարմացումները կարող են կատարվել նաև ձեր բրոքերի միջոցով կամ անմիջապես բաժնետերերի ռեեստրը վարողի հետ կապվելով:

Հարց 29. Ի՞նչ իրավունքներ ունեն բաժնետերերը:

Պատասխան.
Բանկի յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի.

- մասնակցել բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ իրեն պատկանող բաժնետոմսերի չափով՝ ձայների իրավունքով,
- մասնակցել բանկի կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ բանկի գործունեությունից առաջացած շահույթից,
- օգտվել բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքից,
- ստանալ բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկատվությունը, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին (սույն տեղեկատվությունը բանկի բաժնետերերին տրամադրվում է անվճար՝ նրանց գրավոր դիմումի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում),
- Բանկի բաժնետերերը, որոնք բանկի կանոնադրական հիմնադրամում տիրապետում են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս 5

տոկոսին, իրավունք ունեն պահանջել ֆինանսատնտեսական գործունեության ստուգում արտաքին աուդիտի կողմից: Այդ դեպքում բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել բանկի համար:

- բաժնետերերի ընդհանուր ժողովներին իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,
- դատարանում վիճարկել Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները, եթե դրանք հակասում են գործող օրենքներին, իրավական ակտերին կամ Բանկի կանոնադրությանը,
- ազատորեն վաճառել կամ փոխանցել իրենց բաժնետոմսերը՝ առանց մյուս բաժնետերերի համաձայնության,
- միավորվել այլ բաժնետերերի հետ՝ բանկի խորհրդում ներկայացուցիչ նշանակելու համար,
- խորհրդից պահանջել ժողով գումարել, եթե բաժնետերերը տիրապետում են քվեարկության իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 5%-ին,
- ծանոթանալ Բաժնետերերի ընդհանուր ժողովների արձանագրություններին:

Բացի այդ, Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ քվեարկող բաժնետոմսերի 10%-ը կամ ավելին ունեցող բաժնետերերը կարող են խորհրդում ներկայացուցիչ նշանակել առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Անհատապես 10%-ից պակաս բաժնեմաս ունեցողները կարող են միավորվել, և եթե նրանց ընդհանուր բաժնեմասը գերազանցում է քվեարկող բաժնետոմսերի 10%-ը, նրանք կարող են նաև խորհրդում համատեղ ներկայացուցիչ նշանակել առանց ընտրության, եթե կա բաժնետերերի պաշտոնական համաձայնագիր, և Ընդհանուր ժողովը տեղեկացված է դրա գոյության մասին՝ համաձայն օրենքի: 10%-ից պակաս բաժնեմաս ունեցող և չմիավորված բաժնետերերը կարող են համատեղ ընտրել խորհրդում ընդհանուր ներկայացուցիչ՝ առանց Ընդհանուր ժողովի ընտրության:

Հարց 30. Ինչպե՞ս կարող եմ մասնակցել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին:

Պատասխան. Բաժնետերերը կարող են մասնակցել ընդհանուր ժողովին անձամբ կամ լիազորված անձի միջոցով՝ համաձայն տարեկան ընդհանուր ժողովի ծանուցման մեջ նկարագրված ընթացակարգերի, որը բոլոր իրավասու բաժնետերերին հաղորդակցվում է բաժնետերերի ընդհանուր ժողովից առնվազն 21 օր առաջ: Ժողովի գումարման մասին տեղեկությունները նաև հրապարակվում են Բանկի կայքում: Նախորդ տարիների բաժնետերերի ընդհանուր ժողովների մասին տեղեկությունները հրապարակված են Ակբա բանկի www.acba.am կայքում, «Կորպորատիվ կառավարում» էջում:

Հարց 31. Ինչպե՞ս կարող եմ քվեարկել, եթե չեմ կարող անձամբ մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին:

Պատասխան. Դուք կարող եք քվեարկել՝ նշանակելով լիազորված անձ կամ օգտագործելով տարեկան ընդհանուր ժողովի փաստաթղթերում նշված այլ քվեարկության մեթոդներով, օրինակ՝ քվեարկելով քվեաթերթիկով:

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հարց 33. Որտեղ կարող եմ գտնել Ակբայի ցուցանիշների պաշտոնական բացահայտումները և ֆինանսական հաշվետվությունները:

Պատասխան. Բոլոր պաշտոնական բացահայտումները, ֆինանսական հաշվետվությունները և ներդրողների համար նախատեսված նյութերը հասանելի են Ակբա բանկի www.acba.am կայքում («Հաշվետվություններ», «Բաժնետերեր և սեփականատերեր», «Հայտարարություններ» էջերում) և ֆոնդային բորսայի www.amx.am կայքում:

Հարց. 34. Ու՞մ հետ պետք է կապվեմ ներդրողների հետ կապված հարցերի համար:

Պատասխան. Կարող եք կապվել Ակբա բանկի ներդրողների հետ հարաբերությունների ստորաբաժանման հետ, որը ծառայում է որպես բաժնետերերի և պոտենցիալ ներդրողների համար կապի հիմնական կետ (էլ. փոստի հասցե՝ ir@acba.am, հեռախոս՝ +374 10 31888, ներքին համար՝ 8129):

Հարց 35. Որտեղ կարող եմ գտնել նախկինում շահութաբաժինների և բաժնետոմսերի գների մասին տեղեկատվություն:

Պատասխան. Պատմական շահութաբաժնային տվյալները հասանելի են Ակբա բանկի www.acba.am կայքում, «Բաժնետերերի և սեփականատերեր» էջում:
Ակբայի բաժնետոմսերի գների մասին տեղեկատվությունը հասանելի է Հայաստանի ֆոնդային բորսայի, բրոքերային հարթակների և Ակբայի ներդրողների համար նախատեսված նյութերի միջոցով:

Հարց 36. Արդյո՞ք Ակբան ունի ներդրողներին նվիրված հատուկ կայքէջ:
Ներդրողների մասին հիմնական տեղեկությունները տվյալ պահին հասանելի են Ակբա բանկի www.acba.am կայքում, «Բաժնետերերի և սեփականատերեր» էջում: Սակայն բանկը շուտով գործարկելու է նոր կայքէջ, որտեղ կլինի ներդրողների համար նախատեսված առանձին էջ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Սույն փաստաթղթում ներկայացված տեղեկությունները նախատեսված են միայն ընդհանուր տեղեկատվական նպատակների համար և նախատեսված են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի, շահութաբաժինների և երկարաժամկետ ռազմավարության վերաբերյալ թափանցիկություն ապահովելու համար:

Սույն նյութը չի հանդիսանում ներդրումային խորհրդատվություն, ֆինանսական խորհրդատվություն, միջնորդություն կամ առաջարկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ որևէ արժեթղթ գնելու կամ վաճառելու համար:

Ցանկացած ներդրումային որոշում պետք է կայացվի անկախ և, անհրաժեշտության դեպքում, մասնագիտական ֆինանսական, իրավաբանական կամ հարկային խորհրդատուների հետ խորհրդակցությունների հիման վրա: Նախկին ցուցանիշները, ներառյալ շահութաբաժնային պատմությունը կամ աճի տեմպերը, ապագա արդյունքների երաշխիք չեն: Բաժնետոմսերի գները կարող են տատանվել և ենթակա են շուկայական ռիսկերի:

Ակբա բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Հրապարակված է 27.02.2026թ.-ին: